

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<\_\_\_\_\_> <\_\_\_\_\_> 2023 թվականի N - Ն

<ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ> ԲԱՑ  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն> բաց բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունն ու կառավարումը բարելավելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել <Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն> բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կենտրոն) 2023-2027 թվականների ֆինանսական առողջացման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահին՝

1) մինչև 2023թվականի 2-րդ եռամսյակի ավարտն ապահովել իրավախորհրդատուի ծառայությունների ձեռքբերման գործընթացը և ՀՀ կառավարության 2010թվականի դեկտեմբերի 30-ի N1746-Ա որոշման պահանջների կատարումը, Կենտրոնի նոր կանոնադրության հաստատումը,

2) մինչև 2023թվականի 3-րդ եռամսյակի ավարտն ապահովել Կենտրոնի շենքի վերակառուցման/հիմնանորոգման նախագծային փաստաթղթերի տեխնիկական առաջադրանքի մշակման, շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման աշխատանքները,

3) մինչև 2023թվականի 4-րդ եռամսյակի ավարտն ապահովել նախագծային փաստաթղթերի մրցութային ձեռքբերման գնման գործընթացի կազմակերպումը,

4) նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների պետական գնման պայմանագրի կնքումից հետո երկամսյա ժամկետում ներկայացնել 2024-2027թվականների ընթացքում վերակառուցման/հիմնանորոգման առաջնահերթ աշխատանքների կատարման և ֆինանսական միջոցների բաշխման ժամանակացույց:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ կառավարության 2023 թվականի  
<\_\_\_\_> <\_\_\_\_\_> N \_\_\_\_\_ -Ն որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԱՑ  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023-2027ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՅՄԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N531-Լ որոշմամբ հաստատված ՀՀ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկի 29-րդ կետով (Նպատակ 15) 2023թվականին նախատեսվել է՝ «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կենտրոն) կառուցվածքում հիմնել համապատասխան գիտական և լաբորատոր ստորաբաժանումներ, վերազինել և նյութատեխնիկական բազան համալրել ժամանակակից գիտափորձարարական սարքերով ու սարքավորումներով: Շինարարական գիտության զարգացումը խթանելու նպատակով համախմբել հանրապետությունում առկա գիտական ներուժը, բարձրացնել գիտահետազոտական և փորձարարական ուսումնասիրությունների մակարդակը, ներդնել գիտական և ինժեներատեխնիկական կադրերի պատրաստման ու վերապատրաստման համակարգ՝ ապահովելու բնագավառի հեռանկարային զարգացման հնարավորությունը և գիտատեխնիկական քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացումը>:
2. Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) հանրապետությունում քաղաքաշինության բնագավառում գործող միակ գիտահետազոտական կազմակերպությունն է, որի գործունեությունն ուղղված է շինարարական ոլորտի գիտատեխնիկական առաջընթացի ապահովմանը: Վերջին տարիների ընթացքում անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով Կենտրոնը հնարավորություն չի ունեցել արդիականացնել լաբորատոր սարքավորումների փորձարարական բազան և ապահովել բնագավառի արդյունավետ զարգացումը ժամանակակից պահանջներին համապատասխան:
3. Շինարարական գիտության զարգացումն ապահովող նախադրյալների ստեղծման նպատակով նախատեսվում է Կենտրոնի կառուցվածքում հիմնել համապատասխան գիտական և լաբորատոր ստորաբաժանումներ, վերազինել և

համալրել նյութատեխնիկական բազան ժամանակակից գիտափորձարարական սարքերով ու սարքավորումներով:

4. Կենտրոնը նախատեսվում է վերակազմավորել գիտահետազոտական և փորձարարական կենտրոնի, ինչը հնարավորություն կտա համախմբել հանրապետությունում առկա գիտական ներուժը, բարձրացնել գիտահետազոտական և փորձարարական ուսումնասիրությունների մակարդակը, ներդնել գիտական և ինժեներատեխնիկական կադրերի պատրաստման ու վերապատրաստման համակարգ՝ ապահովելու բնագավառի հեռանկարային զարգացման հնարավորությունը և գիտատեխնիկական քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացումը:
5. Գիտափորձարարական կենտրոնի ստեղծումը հնարավորություն կտա համակողմանիորեն ուսումնասիրել նորարարական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները, հանրապետությունում արտադրվող, ինչպես նաև ներկրվող շինարարական նյութերի ֆիզիկամեխանիկական և որակական ցուցանիշները, շրջակա միջավայրի անվտանգության ռիսկերը, կոնստրուկցիաների բնութագրերն ու առանձնահատկությունները, իրականացնել շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի համակարգված հետազննությունների, անձնագրավորման, ինչպես նաև ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պարզ և կրկնակի փորձաքննությունների գործընթացը՝ նպատակ ունենալով ապահովելու դրանց սեյսմակայունության, հուսալի և անվտանգ շահագործման պահանջները:
6. Կենտրոնի ղեկավարումը, բաժնետոմսերի տեղաբաշխումը և գործառույթներն իրականացվում են <Բաժնետիրական ընկերությունների մասին> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:
7. Կենտրոնը գործում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ենթակայությամբ, ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Ա.Ահարոնյան փ.3 հասցեում՝ որպես բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի բաժնեմասի մի մասը տնօրինող-սեփականատեր: Կենտրոնի պաշտոնական կայքէջն է՝ <https://expertcenter.am>, էլեկտրոնային փոստի հասցեն՝ [hayseysmshin@mail.ru](mailto:hayseysmshin@mail.ru), ՀՎՀՀ-ն՝ 00007335:

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### 8. Կենտրոնի նպատակներն են.

- 1) Կենտրոնի զարգացումը՝ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսի ներգրավման միջոցով,
- 2) Կենտրոնի գիտափորձարարական գործառույթների համալրումը նորերով (շենքերի և շինությունների անձնագրավորում, ճարտարապետաշինարարական նախագծերի կրկնակի փորձաքննությունների անցկացում)

### 9. Կենտրոնի խնդիրներն են.

- 3) Կենտրոնի պետական և մասնավոր բաժնեմասերի առանձնացման գործընթացի՝ ՀՀ կառավարության 2010թվականի դեկտեմբերի 30-ի N1746-Ա որոշման պահանջների ապահովումը՝ անկախ փորձագետի՝ իրավախորհրդատուի ծառայությունների ձեռքբերմամբ,
- 4) Կենտրոնի կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը,
- 5) Պետական և մասնավոր բաժնեմասերի առանձնացումից հետո 100% պետական բաժնեմասով Կենտրոնի վերակազմակերպումը Հիմնադրամի՝ որը կգործի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ենթակայությամբ,
- 6) Ֆինանսական միջոցների ներգրավումը,
- 7) Կենտրոնի շենքային պայմանների բարելավումը (մասնաշենքի վերակառուցումը)՝ որպես առողջացման ծրագրի անբաժանելի մաս,
- 8) Կենտրոնի համալրումը նոր տեխնիկական միջոցներով,
- 9) Կենտրոնում զբաղված մասնագետների պարբերական վերապատրաստման կազմակերպումը:

## 3.ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

10. Անկախ փորձագետի (իրավախորհրդատուի) ծառայությունների ձեռքբերումը՝ ՀՀ կառավարության 2010թվականի դեկտեմբերի 30-ի N1746-Ա որոշման պահանջների՝ Կենտրոնի մասնավոր և պետական բաժնեմասերի առանձնացումն ապահովելու նպատակով:

11. Կենտրոնի առաջարկվող նոր կառուցվածքն՝ ըստ Աղյուսակ 1-ի:

<b>Վարչական անձնակազմ</b>			
	<b>Պաշտոնի անվանում</b>	<b>Թվաքանակ</b>	<b>Մասնագիտական որակավորում</b>
	Տնօրեն	1 աշխատակից	Բարձրագույն կրթություն
	Գիտական խորհուրդ	≈ 15 աշխատակից (այդ թվում հրավիրված մասնագետներ)	Մասնագիտական բարձրագույն կրթություն
	Գիտական քարտուղար	1 աշխատակից	Մասնագիտական բարձրագույն կրթություն
	Տնօրենի տեղակալ	1 աշխատակից	Բարձրագույն կրթություն
	Գլխավոր ճարտարագետ	1 աշխատակից	Մասնագիտական բարձրագույն կրթություն
	Իրավախորհրդատուի ծառայությունների ձեռքբերում	1 խորհրդատու	Որակավորված մասնագետ-փորձագետ՝ բարձրագույն կրթությամբ
<b>Կառուցվածքային ստորաբաժանումներ</b>			
<b>Մասնագիտական</b>			<b>Ոչ մասնագիտական</b>
1.Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման բաժին	2.Քաղաքաշինական նորմերի և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման բաժին	3.Քաղաքաշինության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների, թվայնացված կառավարման և նախագծման համակարգերի զարգացման բաժին	10.Հաշվապահություն և տնտեսական բաժին 11. Իրավաբանական բաժին 12. Անձնակազմի կառավարման բաժին 13. Փաստաթղթաշրջանառության բաժին 14. Միջազգային համագործակցության բաժին 15.Գնումների բաժին
4.Երկրաբանական բաժին (այդ թվում փորձագիտակա	5.Ճարտարապետաշինարարական նախագծերի	6.Գիտատեխնիկական տեղեկատվության բաժին (այդ թվում՝ գրադարան, շենքերի և շինությունների տեխնիկական	

ն լաբորատորիա)	փորձաքննությունների բաժին	վիճակի հետազննությունների եզրակացությունների և անձնագրերի շտեմարանների վարում, տեղեկատվության տրամադրում)	
7.Ճարտարապետաշինարարական նախագծերի մշակման բաժին	8.Շրջակա միջավայրի և նոր տեխնոլոգիաների բաժին	9.Գնագոյացման և նախահաշվային բաժին	
Յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանումում նախատեսվում է մինչև 3 աշխատակից			
<b>Լաբորատորիաներ</b>			
1.Սերտիֆիկացման և փորձարկման լաբորատորիա (բետոն, պողպատ, կոնստրուկցիաներ, շինանյութեր)	2.Փորձարկման լաբորատորիա՝ ջերմամեկուսացման, էներգախնայողության տեխնոլոգիաներ, ակուստիկա, օդափոխության համակարգեր		

12. Աշխատավարձի խոշորացված ծախսերի հաշվարկը ներկայացված է ըստ Աղյուսակ 2-ի:

Աղյուսակ 2  
հազ.դրամ

Աշխատակիցներ	Թվաքանակ	Միջին ամսական աշխատավարձ (առանց եկամտային հարկի հաշվառման)	Ծախսեր՝ մեկ ամսվա կտրվածքով	Տարեկան ծախսեր
Մասնագիտական ստորաբաժանումներ	9x3=27	350.0	27x350.0=9,450.0	9,450.0x12=113,400.0
Ոչ մասնագիտական ստորաբաժանումներ	6x3=18	250.0	18x250.0=4,500.0	4,500.0x12=54,000.0
				0



Տեխնիկական սպասարկում իրականացնողներ	5	130.0	$5 \times 130.0 = 650.0$	$650.0 \times 12 = 7,800.0$
<b>Ընդամենը՝</b>	<b>50</b>		<b>14,600.0</b>	<b>175,200.0</b>

#### 4. ԿԵՆՏՐՈՆԻ ԳԻՏԱՎԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Կենտրոնի գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների շրջանակներում նախատեսվում է.

- 1) Նորմատիվատեխնիկական, ծրագրային, ճարտարապետաշինարարական փաստաթղթերի մշակում, մեթոդական ուղեցույցների ու ձեռնարկների կազմում,
- 2) Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի և հողատարածքների ինժեներատեխնիկական հետազոտությունների իրականացում, մասնագիտական եզրակացությունների տրամադրում,
- 3) Շինարարությունում կոմպոզիտային նյութերի օգտագործման ուսումնասիրություն և կիրառելիության վերաբերյալ ցուցումների ներկայացում,
- 4) Բետոնի ստացման տեխնոլոգիաների մշակում, շինարարական տեխնոլոգիաներում նոր նյութերի կիրառման առաջարկների ներկայացում,
- 5) Շենքերի և շինությունների էներգաարդյունավետ և էներգախնայող համակարգերի տեղակայման նախագծային աշխատանքներ, էներգետիկ բնութագրերի կազմում, Շենքերի ջերմաէներգետիկ ցուցիչների մոնիտորինգ,
- 6) Շենքերի և շինությունների անձնագրավորում, անձնագրերի լրացում,
- 7) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննություն, փորձաքննություն անցած փաստաթղթերի կրկնակի փորձաքննությունների իրականացում, մասնագիտական եզրակացությունների տրամադրում,
- 8) Շրջակա միջավայրի անվտանգության ռիսկերի գնահատում,
- 9) Շինարարական նյութերի ֆիզիկամեխանիկական և որակական ցուցանիշների փորձարկում, սերտիֆիկացում պաշտպանիչ և հարդարման շինարարական նյութեր (շինարարական շաղախներ, պոլիմերային-հանքային խառնուրդներ, ներկանյութեր,

տանիքի, ջրամեկուսիչ, կաշուն և հերմետիկացնող մածիկներ, ռետին, տանիքների ջրամեկուսացման նյութեր, արհեստական կաշի և պոլիմերային թաղանթներ, պլաստմասսա, պրոֆիլացված PVC արտադրանք, պոլիմերային խողովակներ, ապակի, հարդարման և երեսպատման նյութեր, մետաղներ և համաձուլվածքներ և դրանցից պատրաստված արտադրանք, ջերմամեկուսիչ նյութեր և արտադրանք և այլն),

10) շենքերի անձնագրերի, կատարված հետազննությունների, գիտատեխնիկական ինֆորմացիայի, նախագծերի շտեմարանի վարում և տրամադրում, ոլորտում գնագոյացման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

## **5. ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

14. Կենտրոնին վերապահվող ծառայություններն են.

- 1) շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության, դրանց երկրաշարժադինացկունության արդի նորմերի ապահովման, վերակառուցման (ուժեղացման, վերականգնման) նպատակահարմարության վերաբերյալ առաջարկությունների տրամադրումը,
- 2) շենքերի և շինությունների ջերմատեխնիկական հետազննությունը,
- 3) բնական և հարկադիր օդափոխության համակարգերի, ռեկուպերացիայի, ծխի հեռացման համակարգերի ստուգումը,
- 4) օդափոխության համակարգերի աէրոդինամիկական և աղմուկի բնութագրերի որոշում
- 5) ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական փորձաքննությունների, այդ թվում կրկնակի փորձաքննությունների իրականացումը,
- 6) քաղաքաշինության ոլորտում գնագոյացման քաղաքականության ուսումնասիրությունը և տեղեկատվության տրամադրումը,
- 7) նախագծային աշխատանքների իրականացումը էներգաարդյունավետ շինարարության ոլորտում, շենքերի կառուցման և վերակառուցման շրջանակներում էներգաարդյունավետ միջոցառումների տեխնիկատնտեսական հիմնավորումը (շենքերի մեկուսացում, արտանետվող օդի ջերմության վերականգնում (ռեկուպերացիա), կեղտաջրերի ջերմության վերականգնումը,

ջերմամատակարարման օպտիմալ սխեմաների ընտրությունը, ինժեներական հաշվարկների իրականացումը, շենքերի ջերմային արդյունավետության հաշվարկը՝ երկրաշարժադիմացկունության նախագծման նորմերի և ծախսարդյունավետության հաշվարկների համադրմամբ,

- 8) ակուստիկ չափումների և հաշվարկների կատարումը (շենքերի ձայնամեկուսացման բնութագրերի որոշում, ցուցիչների որոշման լայնածավալ և լաբորատոր փորձարկումներ, սարքավորման ձայնային հզորության մակարդակը, սարքավորումների և պարսպապատ կառույցների թրթռման մակարդակը, օդափոխության համակարգերի աղմուկի բնութագրերը, երթևեկության հոսքերի աղմուկի բնութագրերը, պարիսպների, ներառյալ բազմաշերտ կառույցների ձայնամեկուսիչ հատկությունները, աղմուկից պաշտպանված տարածքներ ներթափանցող աղմուկը, ինժեներական սարքավորումներից և մեքենաներից, աղմուկի էկրանների և թրթռման մեկուսացման հաշվարկ՝ տրանսպորտի և տեխնոլոգիական սարքավորումների ազդեցությունից պաշտպանվելու համար):
- 9) շենքերի և շինանյութերի արտաքին պատող կառույցների մեկուսացման համակարգերի փորձարկումը (տեղական և արտասահմանյան արտադրողների ջերմամեկուսիչ նյութերի ջերմաֆիզիկական և մեխանիկական բնութագրերի փորձարկումներ, սվաղներ, բետոններ, ջրամեկուսիչ նյութեր, գիպսաստվարաթղթեր, ցեմենտի սալաքարեր և այլ նյութեր, շենքերի փակ կոնստրուկցիաների (արտաքին պատեր, պատերի պանելներ, առաստաղներ, ծածկույթներ) ջերմության փոխանցման դիմադրության չափումներ, միկրոկլիմայի պարամետրերի չափումներ շենքերի տարածքներում, շինանյութերի խոնավության չափում):

## **6. ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ԸՍՏ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐԻ**

15. Կենտրոնի կանխատեսվող **կապիտալ ծախսերը** ներկայացված են ըստ Աղյուսակ 3-ի:

	Միջոցառման անվանումը	2023թ	2024թ	2025թ	2026թ	2027թ
1.	ք.Երևան, Ահարոնյան 3 հասցեում գտնվող Կենտրոնի շենքի վերակառուցման/հիմնանորոգման նախագծային փաստաթղթերի ձեռքբերում (այդ թվում տեխնիկական վիճակի հետազննություն)	30,000.0				
2.	Նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացության ձեռքբերում	1,800.0				
3.	ք.Երևան, Ահարոնյան 3 հասցեում գտնվող Կենտրոնի շենքի վերակառուցման/հիմնանորոգման աշխատանքների իրականացում	-	320,000.0	300,000.0	150,000.0	50,000.0
4.	Կենտրոնի կառուցվածքային ստորոբաժանումների և փորձարարական լաբորատորիաների համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների, սարքավորումների և ծրագրային ապահովման ձեռքբերում	-	65,000.0	15,500.0	19,500.0	22,000.0
	<b>Ընդամենը՝</b>	<b>31,800.000</b>	<b>385,000.0</b>	<b>315,500.0</b>	<b>169,500.0</b>	<b>72,000.0</b>

16. Կենտրոնի կանխատեսվող **ընթացիկ ծախսերը** ներկայացված են ըստ Աղյուսակ 4-ի:

Աղյուսակ 4  
հազ.դրամ

	Ընթացիկ ծախսերն՝ ըստ դասակարգման	2023թ	2024թ	2025թ	2026թ	2027թ
1.	Հիմնական աշխատողների աշխատավարձ	175,200.0	175,200.0x10 %=192,720.0	192,720.0x10% =211,992.0	211,992.0x10 %=233,191.2	233191.2x10 %=256,510.3
2.	Իրավախորհրդատուի ծառայություններ	3,000.0	-	-	-	-
3.	Կոմունալ ծառայություններ	3,600.0	3,960.0	4,356.0	4,791.6	5,270.76
4.	Կապի համակարգեր	600.0	600.0	600.0	600.0	600.0
5.	Տեղեկատվական համակարգերի ֆունկցիոնալությունն ապահովող սերվերի վարձույթ	800.0	800.0	800.0	800.0	800.0
6.	Արագամաշ գույք	2,000.0	2,000.0	2,000.0	2,000.0	2,000.0
7.	Գույքահարկ	1,200.0	1,320.0	1,452.0	1,597.2	1,756.9
8.	Այլ ծախսեր	1,200.0	1,200.0	1,200.0	1,200.0	1,200.0
	<b>Ընդամենը՝</b>	<b>187,600.0</b>	<b>202,600.0</b>	<b>222,400.0</b>	<b>244,180.0</b>	<b>268,137.96</b>
9.	1-ին, 3-րդ և 7-րդ կետերով նախատեսված ծախսերի հաշվարկն ըստ տարիների կատարվել է 10% տարեկան մոտավոր գնաճի հաշվառմամբ	2023-2027թթ կանխատեսվող կապիտալ և ընթացիկ բնույթի ծախսերը՝ մասնավորապես աշխատավարձերի ֆինանսական գնահատականները, հիմնավորումները դիտարկվել են ըստ ԱՐՄՍՍՍՍ << սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական 2022թ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների՝ 31.01.2023թ դրությամբ: Ծախսերի հիմքում դիտարկվել է 2022թ դեկտեմբեր ամսին արձանագրված՝ միջին ամսական անվանական աշխատավարձի չափը՝ շուրջ 309.080հազ.դրամը (պետական՝ 254.004հազ.դրամ և ոչ պետական՝ 331.108հազ.դրամ), որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ 2021թվականի դեկտեմբերի նկատմամբ աճել է ավելի քան 20%-ով (20.9%):				

17. Կենտրոնի առողջացման համար կանխատեսվող ֆինանսական ապահովման ընդհանուր ծախսերն՝ ըստ Աղյուսակ 5-ի:

	Ֆինանսական ապահովման ընդհանուր ծախսեր	2023թ	2024թ	2025թ	2026թ	2027թ
1.	Կապիտալ	31,800.000	385,000.0	315,500.0	169,500.0	72,000.0
2.	Ընթացիկ	187,600.0	202,600.0	222,400.0	244,180.0	268,137.96
	<b>Ընդամենը՝</b>	<b>219,400.0</b>	<b>587,600.0</b>	<b>537,900.0</b>	<b>263,680.0</b>	<b>413,680.96</b>

17. Կենտրոնի շենքի վերակառուցման/հիմնանորոգման աշխատանքների խոշորացված ծախսերի հաշվարկը կատարվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան.

1) ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.04.2009 թ. N 35-Ն հրամանի համաձայն.

ք.Երևան, Ա.Ահարոնյան 3 հասցեում գտնվող «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության 2866քմ մակերեսով վարչական շենքի վերակառուցման շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը խոշորացված ցուցանիշներով /ՇԱԽՑ/ կազմում է՝

**2866.0 քմ x 182.79 x 1.298 x 1.2 ≈ 820,000.0 հազ.դրամ,**

որտեղ.

1.298՝ 2008-2022 թթ. գնաճի գործակից (2008թ. - 305 դրամ, 2022թ. դեկտեմբերի 6-ի դրությամբ ԿԲ տվյալներով – 395.91 դրամ), 1.2 – ԱԱՀ (20%) գործակից:

2) ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 15-ի N 19-Ն հրամանի համաձայն.

ա) օբյեկտն ըստ բարդության 4-րդ կարգի է,

բ) նախագծանախահաշվային փաստաթղթերի խոշորացված/մոտավոր արժեքը կկազմի.

**820,000.0 հազ.դրամ x 3,5% ≈ 28, 700.0 հազ.դրամ:**

Բացի այդ, նախագծման նախապատրաստական փուլում կպահանջվի լիցենզավորված կազմակերպության կողմից

1. Շենքի տեխնիկական վիճակի և տարածքի ինժեներատրկաբանական հետազննություններ՝ պայմանագրային հիմունքներով (շուրջ 1500.0 հազ. դրամ), որոնց ձեռքբերումը տեխնիկական առաջադրանքի շրջանակներում հնարավոր է վերապահել Նախագծային կազմակերպությանը:

**Արդյունքում՝ նախագծման ծախսերը կկազմեն**

**28,700.0 + 1,500.0 ≈ 30,000.0 հազ.դրամ**

3) ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատված 8 հավելվածի համաձայն՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի պարտադիր փորձաքննության արժեքը կկազմի՝

**30,000.0 հազ.դրամ x 6,0% ≈ 1,800.0 հազ.դրամ:**

4) Առողջացման Ծրագրի շրջանակներում նախատեսվող կապիտալ ծախսերի խոշորացված արժեքը կկազմի՝

**820,000.0 + 30,000.0 + 1,800.0 ≈ 852,000.0 հազ.դրամ:**

Տվյալ հաշվարկով նախատեսված ծախսերը ենթակա են ճշգրտման սահմանված կարգով մշակված նախագծային փաստաթղթերի և կնքվող պայմանագրերի շրջանակներում:

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### **<ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ> ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

#### **1. Անհրաժեշտությունը**

<Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն> բաց բաժնետիրական ընկերության 2023-2027 թվականների ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի <Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին> N1902-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի մասով միջոցառումների ծրագրի 6.1 կետի, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի <Քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին> N531-Լ որոշմամբ հաստատված ՀՀ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկի 29-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N1746-Ա որոշման պահանջների կատարման անհրաժեշտությամբ:

#### **2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

**<Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն> բաց բաժնետիրական ընկերության մասնագիտական ռեսուրսի և կանոնադրական կարողությունների վերաբերյալ**

Կենտրոնի մասնագիտական ռեսուրսն ընդգրկում է քաղաքաշինության ոլորտում որակավորում ունեցող մասնագետներ, որոնք տարիներ շարունակ աշխատել և համագործակցել են քաղաքաշինության բնագավառի տարբեր մասնագիտական



կառույցների և մասնագետների հետ՝ Շինարարների միություն, Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան, նախագծային կազմակերպություններ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, տարբեր ոլորտային գերատեսչություններ և այլն: Կենտրոնն իր իրավասությունների շրջանակներում, ներկայումս իրականացնում է բնագավառում պետական ծրագրերի համար նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքներ, շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի ինժեներական հետազննություններ, գիտահետազոտական ու փորձարարակոնստրուկտորական աշխատանքներ, որոնք առավել վերահսկելի են Կոմիտեի կողմից՝ չբացառելով մասնագիտական այլ անհրաժեշտ ռեսուրսի ներգրավումը:

Սակայն Կենտրոնի շենքային ներկայիս պայմանները, մասնագիտական և տեխնիկական ռեսուրսով ապահովվածությունը բավարար մակարդակում չեն, ինչի արդյունքում Կենտրոնի գործունեությունը կրում է <լոկալ> բնույթ և վերջինս ամբողջ ներուժով չի ընդգրկված քաղաքաշինության բնագավառի գերձանրաբեռնված և ծավալուն գործընթացներում:

#### ***Վավերագրություն Կենտրոնի մասին***

Հանրապետությունում շինարարական քաղաքականությունը տեխնիկապես հիմնավոր և արդյունավետ վարելու նպատակով դեռևս 1930 թվականին Խորհրդային Հայաստանում, որպես կառուցվածքների Անդրկովկասյան ինստիտուտի մասնաճյուղ, հիմնադրվեց «Կառուցվածքների հայկական գիտահետազոտական ինստիտուտը» («ԱԻՍ»), որը զբաղվել է տեղական շինանյութերի (պեմզա, տուֆ խարամներ և այլն) հետազոտմամբ, դրանցով թեթև բետոնե կոնստրուկցիաների մշակմամբ, ինչպես նաև սեյսմակայուն շինարարության որոշ հարցերով: «ԱԻՍ»-ի և ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայսեյսմիկ շինարարության բյուրոյի միավորմամբ 1943 թվականին Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծվեց «Շինանյութերի ու կառուցվածքների հայկական գիտահետազոտական ինստիտուտը» («ԱԻՍՍ»): Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ 1957 թվականին «ԱԻՍՍ»-ն անցել է Հայկական ՍՍՀ շինարարության նախարարության

ենթակայության տակ, իսկ 1957 թվականին ընդգրկվել է ՀՍՍՀ Պետշինի կազմում: Ինստիտուտի արգասաբեր գործունեության արդյունքում հետագայում նրա գիտական ստորաբաժանումների հենքի վրա են ստեղծվել մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ՝ ՀՀ ԳԱԱ մեխանիկայի, Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմալոգիայի, Քարի և սիլիկատների ինստիտուտները: Հետագայում ընդլայնվել է ինստիտուտի գործունեության շրջանակը՝ ներառելով նաև ճարտարապետության, շինարարական տնտեսագիտության, շինարարական ֆիզիկայի, փորձարարական նախագծման և քաղաքաշինության բնագավառին առնչվող գրեթե բոլոր գիտական ու գիտափորձարարական ուղղությունները: 1974 թվականին «ԱԻՍՄ»-ը վերակազմավորվել է «Շինարարության և ճարտարապետության Հայկական գիտահետազոտական ինստիտուտ»-ի («ՀայՇինՃարտ ԳՀԻ»): ՀՀ Կառավարության 1991 թվականի մարտի 11-ի N 199 որոշմամբ ինստիտուտը վերակազմավորվել է որպես «Սեյսմակայուն շինարարության Հայկական գիտահետազոտական ինստիտուտ» («Հայսեյսմշին ԳՀԻ») և տրվել է սեյսմակայուն շինարարության հանրապետական գիտահետազոտական կենտրոնի կարգավիճակ:

1995 թվականին ՀՀ Կառավարության որոշմամբ ինստիտուտը վերակազմավորվել է որպես «Սեյսմակայուն շինարարության և կառուցվածքների պահպանման Հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերություն («Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ՓԲԸ), իսկ 2004 թվականի դեկտեմբերից, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ԲԲ ընկերություն: Ընկերության բաժնետերերի 2015 թվականի հունվարի 19-ի ընդհանուր ժողովի որոշմամբ այն վերանվանվել է «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲ ընկերության:

Իր գործունեության առաջին իսկ տարիներից ինստիտուտն ապահովել է հանրապետության շինարարական ոլորտի տեխնիկական առաջընթացը, մի շարք կարևորագույն ուղղություններով «բնական լցանյութերով թեթև բետոնների ու կոնստրուկցիաների արտադրություն և այլն» նախկին ԽՍՀՄ-ում ճանաչվել է գլխավորող կազմակերպություն և լրջագույն աշխատանքներ կատարել նաև միութենական մասշտաբով: Մշակել ու ներդրել է բազմազան շինանյութեր,

կառուցվածքների առանձին տարրեր, շենքերի ամբողջական նոր կոնստրուկտիվ լուծումներ, նախագծել է փորձարարական շենքեր ու ամբողջական թաղամասեր, լուծել տարածքների կառուցապատման խնդիրներ: Զգալի ավանդ ունի բետոնի և երկաթբետոնի տեսության և հաշվարկման ինժեներական մեթոդների մշակման, բնական և տեխնածին աղետներից ու շահագործման ոչ լիարժեք պայմաններից տուժած կառուցվածքների տեխնիկական վիճակի հետազննման, դրանց հետևանքների վերացման մեթոդների ու միջոցառումների մշակման, շինարարության ոլորտը կարգավորող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման գործում: Անգնահատելի է ինստիտուտի ավանդը Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքների հետազոտման, վերլուծության և արդյունքում սեյսմակայուն շինարարության նախագծման ազգային նորմերի մշակման ու ներդրման, երկրաշարժի հետևանքների վերացման, աղետի գոտում վերականգնողական աշխատանքների ու նոր շինարարության իրականացման համար անհրաժեշտ մի շարք նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման և այլ հարցերում:

Ինստիտուտն ունի գիտատեխնիկական գործունեության հարուստ տարեգրություն, անցել է փառավոր ուղի և նախկին միութենական շինարարական գիտության ոլորտում ճանաչվել է առաջատար: Ստեղծել է շինարարական գիտության հայկական դպրոցը, որը կազմում էր հանրապետական, միութենական և համաշխարհային համբավ ունեցող գիտնականների մի ամբողջ համաստեղություն:

Նշված ուղղությունների մշակման և զարգացման բնագավառում հայկական շինարարական դպրոցի հիմնադիրներ են հանդիսացել ականավոր գիտնականներ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսներ Արմենակ Գևորգի Նազարովը և Միխայիլ Զախարի Սիմոնովը: Գործունեության ընթացքում ինստիտուտի կողմից մշակվել և ներդրվել են տասնյակ սեյսմակայուն շենքերի և կառուցվածքների տիպարային և բազմակի օգտագործման նախագծեր, բազմակի շինանայութերի և շինվածքների բաղադրակազմեր, շենքերի սեյսմամեկուսացման և ուժեղացման մեթոդիկաներ:

Ինստիտուտը հանդիսացել է բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի հիմնական մշակող, մասնավորապես Սպիտակի 1988թ. աղետալի երկրաշարժից հետո հիմնական դերակատարություն է ունեցել սեյսմակայուն շինարարության նորմատիվատեխնիկական փաստաթղթերի նոր համակարգի արագ ստեղծման և ներդրման գործում:

Ինստիտուտը հանդիսացել է շինարարական գիտության մասնագետների պատրաստման իսկական դարբնոց, բնագավառի համար նախապատրաստելով հարյուրավոր գիտական կադրեր, այդ թվում մի քանի տասնյակ գիտությունների դոկտորներ և թեկնածուներ:

1995 թվականին ՀՀ Կառավարության որոշմամբ, 20% անվարձահատույց սեփականաշնորհմամբ, ինստիտուտը վերակազմավորվեց որպես բաժնետիրական ընկերություն:

Դրանից հետո օտարվեցին ինստիտուտի գիտաարտադրական և լաբորատոր մասնաշենքերը, հողատարածքները, իսկ լաբորատոր շենքերից մեկը չնչին վարձավճարով հանձնվեց ոստիկանությանը:

Այդ պահից սկսվեց ինստիտուտի կազմալուծման գործընթացը և այն աստիճանաբար դադարեց որևէ լուրջ դերակատարություն ունենալ շինարարական համալիրի գիտատեխնիկական գործունեության բնագավառում:

Հաշվի առնելով, վերը նշված փաստերը և վերլուծելով հանրապետության շինարարական համալիրի վերջին 25 տարիների գործունեությունը, կարելի է միանշանակ արձանագրել, որ բնագավառում դանդաղել են գիտատեխնիկական առաջընթացը, շենքերի և կառուցվածքների նոր կոնստրուկտիվ լուծումների մշակումները, սակավ են առաջարկությունները նոր արդյունավետ շինանյութերի և շինվածքների ստեղծման ուղղությամբ, կտրուկ նվազել է սեյսմակայուն շինարարության ոլորտի գիտական մշակումների քանակը, անհրաժեշտ զարգացում չի ստանում բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգը, գիտական և ինժեներատեխնիկական աշխատողների կադրային բազան վերացման շեմին է:

Հանրապետության ամբողջ տարածքը գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում, իսկ դրա 80 տոկոսից ավելին իրական սեյսմիկ վտանգը կազմում է 8 և ավելի բալ, լայն տարածվածություն ունեն արտաքին երկրաբանական երևույթները (սողանքներ, սելավներ և այլն), դրանցից ամենամեծ վտանգ են ներկայացնում սողանքները, որոնք զբաղեցնում են ընդհանուր մակերեսի 4,1 տոկոսը և տարեկան այս երևույթից երկրի սոցիալ-տնտեսական կառույցներին հասցվող ուղղակի վնասը կազմում է շուրջ 43 մլն. ԱՄՆ դոլար:

Վերը նշված եզրահանգումների և փաստերի վերլուծությունը բերում է այն միանշանակ որոշման, որ ստեղծված իրավիճակի հետագա շարունակությունը անընդունելի է, անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել իրավիճակի բարելավման ուղղությամբ:

Սեփականաշնորհման արդյունքում մասնատման, պետական հոգածությունից զրկվելու և վերջին տարիների ընթացքում անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հնարավորություն չունենալով արդիականացնել լաբորատոր սարքավորումների փորձարարական բազան և ժամանակակից պահանջներին համապատասխան խթանել բնագավառի արդյունավետ զարգացումը, ներկայումս Կենտրոնը գտնվում է ֆիզիկապես, բարոյապես և ֆինանսապես քայքայված վիճակում: Անառարկելի է, որ Կենտրոնի լուծարումն անդառնալի կորուստ կլինի հանրապետության շինարարական ոլորտի համար:

Միաժամանակ, որպես վերջին տարիներին արձանագրված և խնդրին առնչվող նախադեպ (որպես հաջողված փորձ) հարկ է նշել, որ Կենտրոնն իր փոքր ներուժով ներգրավվել և դարձել է հեղինակ ՀՀ 2021-2022թթ պետական բյուջեի միջոցների հաշվին նախատեսված և Կոմիտեի պատվիրատվությամբ իարկանացվող մի շարք նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (ՀՀՇՆ 34-01-2022 <Նավթի, նավթամթերքի և հեղուկ գազի ստորգետնյա պահեստարաններ>, ՀՀՇՆ 13-03-2022 <Կրող և պատող կոնստրուկցիաներ>, ՀՀՇՆ 40-01.03-2022 <Կոյուղի.Արտաքին ցանցեր և կառուցվածքներ> շինարարական նորմերի) մշակման, անբավարար և վթարային վիճակում գտնվող շենքերի տեխնիկական վիճակի հետազննության

աշխատանքների, քաղաքաշինական օբյեկտների մասով մասնագիտական եզրակացությունների տրամադրման գործընթացների:

Ներկայումս՝ **ՀՀ կառավարության 2010թվականի դեկտեմբերի 30-ի N1746-Ա որոշման պահանջների** չկատարման պայմաններում՝ մասնավոր և պետական բաժնեմասերի չտարանջատման հետևանքով՝ առաջացել են բազմաթիվ խնդիրներ, որոնք տեղիք են տվել մասնավոր բաժնետոմսերի սեփականատերերի դժգոհությունների, դատական գործընթացների՝ ունեն տարիների վաղեմություն, գույքային են և պահանջում են շուտափույթ լուծում:

Խնդիրների մի մասին իրազեկված է նաև ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն:

ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկով Նախագծի փաթեթին կից ներկայացվել են նաև մի շարք փաստաթղթեր, որոնք կապված են Ընկերության ֆինանսական գործունեության հետ (աուդիտի արդյունքներ, բաժանիչ հաշվեկշիռ, հայցադիմում և այլն):

Ուստի, առկա կազմակերպարավական կարգավիճակում գտնվող ընկերության, առանց պետական բաժնեմասի տարանջատման և գույքային խնդիրների լուծման, որևէ առաջընթացի և զարգացման մասին եզրահանգումները գնահատվում են որպես ոչ իրատեսական:

### **3. Առաջարկվող լուծումները**

Առողջացման ծրագրի շրջանակներում՝ առաջնահերթ խնդիրների լուծում.

- 1) Կենտրոնի պետական և մասնավոր բաժնեմասերի առանձնացման գործընթացի ապահովում (գույքային կամ դրամական փոխհատուցմամբ)
- 2) 100% պետական բաժնեմասով Կենտրոնի իրավական –կազմակերպական ձևի փոփոխություն,
- 3) Կենտրոնի կանոնադրական և կառուցվածքային փոփոխություններ
- 4) Ֆինանսական միջոցների ներգրավմամբ՝ Կենտրոնի շենքային պայմանների բարելավում,
- 5) Կենտրոնի համալրում մասնագիտակն և տեխնիկական ռեսուրսով՝ վերջիններիս պարբերաբար համալրումն ու վերապատրաստման կազմակերպումը

### 3.1 Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

- ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշում, **կետ 2.7.** <Շինարարությունում նոր տեխնոլոգիաների ներդրման, տեղական հումքով շինանյութերի և շինարարության որակի հսկման մեթոդների մշակման ու իրագործման նպատակով ձևավորել գիտահետազոտական և փորձարարական բազա, պատրաստել (վերապատրաստել) գիտական կադրեր, որը հնարավորություն կտա ապահովելու նորարարական տեխնոլոգիաներին արագ արձագանքման, կիրառության և ներդրման... >

- ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի **6.1-րդ կետ՝** <Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն> ԲԲԸ արդիականացման (առողջացման) ծրագրի մշակման պատվիրակում, ծրագրի մշակման աշխատանքների ընթացիկ համակարգում, ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացում (օրենսդրության վերանայում, Կենտրոնի վերակազմակերպման աշխատանքների ապահովում, կանոնադրական նոր պահանջների ձևավորում, մասնագիտական կադրերի ընտրություն, ներգրավում) >

- ՀՀ կառավարության 2021թվականի ապրիլի 8-ի ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին> N531-Լ որոշման Հավելվածի **87-րդ կետ՝** <Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) հանրապետությունում միակ գիտահետազոտական կազմակերպությունն է, որի գործունեությունը պետք է նպատակաուղղել շինարարական ոլորտի գիտատեխնիկական առաջընթացի ապահովմանը: Վերջին տարիների ընթացքում անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով Կենտրոնը հնարավորություն չի ունեցել արդիականացնել լաբորատոր սարքավորումների փորձարարական բազան և ապահովել բնագավառի արդյունավետ զարգացումը ժամանակակից պահանջներին համապատասխան:>

Միաժամանակ հարկ է նշել, որ <Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն> բաց բաժնետիրական ընկերության 2023-2027 թվականների ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին> Հայաստանի Հանրապետության

կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ, պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում կարող են նախատեսվել փոփոխություններ, լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն:

#### **4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և Կենտրոնի աշխատակիցների կողմից:

#### **5. Ակնկալվող արդյունքը**

Քաղաքաշինության բնագավառի գիտական ներուժի համալրում, գիտական և փորձարարական աշխատանքների կազմակերպում, ոլորտի զարգացում՝ պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ: